

2001 թվական

ՀՀ վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի նիստը կայացել է 2001թ. հունվարի 24-ին, օրակարգում ընդգրկված են եղել հետևյալ հարցերը՝

1. *Հայաստանի Հանրապետության վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի կանոնադրության մասին:*
2. *կազմակերպչական հարցեր:*

Նիստի արդյունքում որոշվեց հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի կանոնադրությունը՝ հաշվի առնելով արված առաջարկությունները և դիտարկությունները:

Հանձնարարվեց՝

- ա) ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ պարոն Կ. Հայրապետյանին՝ յոթօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 7 նոյեմբերի 2000 թվականի N734 որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագիծ:
- բ) ՀՀ նախարարություններին, գերատեսչություններին՝ յոթօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել տեղեկատվություն 2001 թվականի իրենց աշխատանքային ծրագրերով նախատեսված նրիտասարդության ոլորտին վերաբերող միջոցառումների մասին:
- գ) ՀՀ մշակույթի, նրիտասարդության հարցերի և սպորտի նախարարությանը՝
 - ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և Հայաստանի նրիտասարդության ազգային խորհրդի հետ համատեղ ներկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել հանրապետության նրիտասարդական կազմակերպությունների մասին ամփոփ տեղեկատվություն:
 - նրիտասարդական կազմակերպություններին առաջարկել՝ խորհրդում քննարկման համար, ներկամյա ժամկետում ներկայացնել իրենց կողմից նախատեսվող նրիտասարդության հիմնահարցերին վերաբերող ծրագրերը:

ՀՀ վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստը կայացել է 2001թ. փետրվարի 27-ին:

Օրակարգում քննարկվել է ՀՀ վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի աշխատանքների ընթացքի մասին հարցը:

Նիստի արդյունքում հանձնարարվել է՝

ՀՀ մշակույթի, նրիտասարդության հարցերի և սպորտի նախարարի տեղակալ Վ.

Բարսեղյանին՝

ա) մեկամյա ժամկետում ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների ներկայացրած միջոցառումների ծրագրի հիման վրա ՀՀ վարչապետին առնչվող նրիտասարդության հարցերով խորհրդի հաստատմանը ներկայացնել 2001թ. նրիտասարդության ոլորտի միջոցառումների ամփոփ ծրագիրը՝ իր պատասխանատուներով և ժամանակացույցով,

բ) նախաձեռնել սահմանված կարգով «Նրիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը և 3 ամսից հետո ՀՀ վարչապետին գեկուցել օրենքի պատրաստվածության և աշխատանքների ընթացքի մասին:

ՀՀ արդյունաբերության եւ առևտրի նախարարի տեղակալ Ա. Գրիգորյանին՝ ՀՀ կառավարության հաստատած բարձր տեխնոլոգիաների զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավել հանրապետության ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդները:

2002 թվական

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի 2002 թվականի առաջին նիստը կայացել է մայիսի 3-ին

Օրակարգում՝

1. ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների եւ մարզպետարանների 2002 թվականի երիտասարդության ոլորտի միջոցառումների ծրագրի մասին:
2. Դիլիջանում անցկացվելիք Համահայկական երիտասարդական փառատոնի ծրագրի մասին:
3. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից տրամադրած ուղեգրերի բաշխման մասին:

Որոշվեց հաստատել ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների եւ մարզպետարանների կողմից ներկայացված՝ 2002 թվականի երիտասարդության ոլորտի միջոցառումների ծրագիրը:

Հանձնարարվեց՝

- ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Վ. Բարսեղյանին՝
ա) Ճշտել եւ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն 2002 թվականի հաստատված ծրագրով նախատեսված երիտասարդության ոլորտի միջոցառումների կատարման ընթացքի մասին:
բ) Մարզպետարանների կողմից ներկայացված՝ 2002 թվականի երիտասարդության ոլորտի միջոցառումների ծրագրերը համադրել եւ վերջիններիս առաջարկել լրամշակել ներկայացված ծրագրերը:
- ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Վ. Բարսեղյանին, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Պ. Սաֆարյանին՝
Համատեղ դիտարկել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական միջոցառումների իրականացման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման հնարավորությունները:
- Հավանություն տալ 2002 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 5-ը Դիլիջանում անցկացվելիք Համահայկական երիտասարդական փառատոնի ծրագրին:
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ Կ. Արեյանին, Հայաստանի

Հանրապետության կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ Ա. Կարապետյանին՝
7 - օրյա ժամկետում ճշտել փառատոնին մարզերի մասնակցության հետ կապված ֆինանսական հարցերը:

- ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Վ. Բարսեղյանին, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ Ա. Կարապետյանին՝

Փոխադարձ համագործակցությամբ իրականացնել ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից տրամադրված ուղեգրերի բաշխման կազմակերպչական աշխատանքները և կազմել ուղեգրերից օգտվողների վերջնական ցուցակները:

Հայաստանի Հանրապետության վարչապետին առնթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստը կայացել է 2002 թվականին դեկտեմբերի 20-ին:

Նիստի արդյունքում որոշվեց՝

- Բավարար գնահատել «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի մեկամյա գործունեությունը՝ կարևորելով Սփյուռք-Հայաստան կապերի ամրապնդումը:
- Բավարար գնահատել ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների կողմից 2002 թվականի անցած 11 ամիսների ընթացքում իրականացված երիտասարդական ոլորտին վերաբերող ծրագրերի և միջոցառումների միջանկյալ հաշվետվությունները:

Հանձնարարվեց՝

ՀՀ նախարարություններին, գերատեսչություններին, մարզպետարաններին՝

- Մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն ներկայացնել 2002 թվականի իրենց աշխատանքային ծրագրերով նախատեսված և իրականացված երիտասարդական ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը և ժամանակացույցը, ինչպես նաև 2003 թվականի աշխատանքային ծրագրերով նախատեսվող երիտասարդական ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ) Վ. Բարսեղյանին՝

- ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին առնթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել 2002 թվականի իրենց աշխատանքային ծրագրերով նախատեսված և իրականացված երիտասարդական ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը և ժամանակացույցը, ինչպես նաև 2003 թվականի աշխատանքային ծրագրերով նախատեսվող երիտասարդական ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:
- Հայաստանի Հանրապետության վարչապետին առնթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստը հրավիրել 2003 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակում: